ԹԻՎ 8 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 8-Ա

22 սեպտեմբերի 2023թ.
ք. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով Երևանի ավագանու ընտրություններում թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում ձևավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին արձանագրված խախտում-ների վերաբերյալ գնահատականները՝ թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա գրառումները

2023 թվականի սեպտեմբերի 17-ին տեղի են ունեցել Երևանի ավագանու ընտրություններ: Ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորվել է թվով 63 ընտրական տեղամաս, սահմանվել են թվով 63 տեղամասային կենտրոն և կազմավորվել թվով 63 տեղամասային ընտրական հանձնաժողով:

Թվով 63 տեղամասերից 54-ի տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառումներ առկա չեն: Այդ տեղամասերն են՝ 8/1, 8/3, 8/4, 8/5, 8/6, 8/7, 8/8, 8/9, 8/10,8/11, 8/12, 8/15, 8/16, 8/17, 8/18, 8/19, 8/20, 8/21, 8/22, 8/23, 8/24, 8/25, 8/27, 8/29, 8/30, 8/31, 8/32, 8/33, 8/34, 8/35, 8/36, 8/37, 8/39, 8/40, 8/41, 8/42, 8/43, 8/44, 8/47, 8/48, 8/50, 8/51, 8/52, 8/53, 8/54, 8/55, 8/56, 8/57, 8/58, 8/59, 8/60, 8/61, 8/62, 8/63:

Մյուս տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները՝

Թիվ 8/02 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

1) «Ազգային առաջընթաց» կուսակցության դիտորդ Վահրիհ Ներսիսյանը գրառել է, որ «Հանձնաժողովի նախագահի ոչ պատշաճ աշխատանք, ապահովելով օրենքով սահմանված կարգը»:

2) «Հասարակական դաշինք /համատեղ/ անկախ դիտորդը գրառել է հետևյալը «Հավանաբար տեղի է ունեցել ժամային թյուրիմացություն և 1 կուսակցությունից՝ կարճ ժամ անցավ ներկա է գտնվել 2 վստահված անձ»:

Թիվ 8/13 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

3) «Ազգային Առաջընթաց» կուսակցության դիտորդ Պեդրո Հադանի Զարոքյանը գրառել է, «2 հատ 2-րդ համարի քվեաթերթիկ է դուրս եկել ծրարից»
4) «Արդար Հայաստան» կուսակցության դիտորդ Նվեր Արշավիրի Ղահրամանյանը գրառում է կատարել, որ 2 հատ 2-րդ համարի քվեաթերթիկ է դուրս եկել ծրարից»:

Թիվ 8/14 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

5) ««Ականատես» դիտորդական առաքելության դիտորդ Մկրտչյան Վիրապը և Միրզախանյան Ֆլորան» գրառում է կատարել, որ Ընտրողին առաջարկվել է օգնել, սակայն օգնողը չի կարողացել գտնել նրա ցանկացած կուսակցության թեկնածուին և ընտրողը չսպասեց նոր օգնողի մոտենալուն: Զայրացած հեռանում էր տեղամասից, սակայն վերադարձավ և կատարեց իր ընտրությունը:»

Թիվ 8/26 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

6) ««Թամոյան Խաժակ Սուրիկի» հայտնեց, որ «Հանձնաժողովի անդամը նախապես քվեաթերթիկը և ծրարները դասակարգված դրել էր իր կողքին և պատրաստի վիճակով տրամադրում է քաղաքացիներին, ինչը առիթ է հանդիսանում կասկածելու քվեարկությունը կեղծելու մասին: Դեպքի վերաբերյալ տեղեկացրել ենք հանձնաժողովի նախագահին, վերջինս զգուշացրել է տվյալ հանձնաժողովի անդամին խնդիրը կարգավորելու, սակայն հանձնաժողովի անդամը հրաժարվել է կատարել հանձնաժողովի նախագահի հրամանը, նշելով, որ իրեն հարմար է աշխատել էդպես»:
7) ««Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամներ՝ Անի Խաչատրյանը և Արմեն Ղազարյանը հայտնեցին, որ «Վստահված անձանցից երկուսը փաստացիորեն գտնվում են ընտրատեղամասից դուրս, սակայն հեռանալու վերաբերյալ գրանցամատյանի համապատասխան բաժնում նշում չի կատարվել»:

Թիվ 8/28 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

8) ««Անկախ դիտորդ» հասարակական դաշինք/համատեղ Նարեկ Հրանտի Ղևոնդյանը հայտնեց Հանձնաժողովի քարտուղար «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի դիտորդին՝ դիտորդների համար նախատեսված հատվածում գրանցելու փոխարեն գրանցել է վստահված անձանց գրանցման հատվածում:»

Թիվ 8/38 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

9) ««Ականատես» դիտորդական առաքելություն»-ը հայտնել է, որ «Ոչ դիտավորությամբ քվեարկությունը սկսելուց առաջ քվեատուփին չի փակցվել ինքնակպչուն թղթերը»:

Թիվ 8/45 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

10) ««Հանձնաժողովի անդամներ՝ Մանուչարյան Մուշեղ, Պապյան Իրինա, Դիտորդներ՝ Անի Խաչատրյան, Արմեն Ղազարյանը արձանագրել են, որ

«Արձանագրում եմ այն փաստը, որ քվեաթերթիկները և ծրարները եղել են նախապես դասավորված, ինչի մասին մեկ անգամ զգուշացվել է հանձնաժողովի նախագահին, սակայն սա առաջացնում է կապված այն մասին, որ տեղի է ունեցել ընտրողների իրավունքի խախտում:

Թիվ 8/46 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

11) ««Հանձնաժողովի անդամ՝ Թևոսյան Խաչատուրը և դիտորդներ Անի Խլղաթյանը և Արմեն Ղազարյանը արձանագրել են, որ «Արձանագրում եմ այն փաստը, որ դիտողության ընթացքում մեկ անգամ զգուշացնելուց հետո կրկին խաթարվել է հետևյալ կարգը: Քվեաթերթիկները և ծրարները:»

Թիվ 8/49 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

12) ««Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությունը արձանագրել է, որ Խախտումներ չեն գրանցվել, հոյակապ նախագահ, գերազանց աշխատանք, հոյակապ կոլեկտիվ: Շնորհակալություն»:

13) «Ազգային Առաջընթաց» կուսակցությունից Արմեն Սերյոժայի Հովսեփյանը հայտնել է, որ ««Խախտումներ չեն գրանցվել, տեղի է ունեցել չնչին թյուրիմացություն: Հիասքանչ ու պարտաճանաչ թիմ՝ հանձինս հանձնաժողովի նախագահի: Շնորհակալություն»»:

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի եզրակացությունները

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է սույն օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

Թիվ 1, 2, 7, 8, 9, 12 և 13 պայմանական համարակալումները կրող գրառումները կա՛մ չեն առնչվում քվեարկության կարգի խախտումներին, կա՛մ նկարագրում են խախտումների կանխման, կա՛մ վերացման հանգամանքներ: Որոշ գրառումներով փաստվում են որոշակի իրավիճակներ կամ հանգամանքներ, որոշ գրառումներ էլ նկարագրում են հանձնաժողովի գործողությունները՝ ուղղված քվեարկության ընթացքը պատշաճ կազմակերպելուն կամ խախտումը վերացնելուն կամ կանխելուն, որոշ գործողություններ տեղի են ունեցել անզգուշության հետևանքով, սակայն ընթացակարգային խախտման բնույթ են կրում, ուստի դրանցում ներկայացված հանգամանքները չեն կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման թիվ 3 և 4 պայմանական համարակալումները կրող գրառումների կապակցությամբ թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ընտրական օրենսդրությունը հստակ կարգավորել է քվեարկության ծրարից մեկից ավելի քվեաթերթիկներ դուրս գալու հարցը՝ սահմանելով, որ նման դեպքում հաշվարկի մեջ ընդգրկվում է այն քվեաթերթիկը, որի վրա փակցված է ինքնասոսնձվող դրոշմանիշը, իսկ այն քվեաթերթիկը, որի վրա դրոշմանիշ չկա, համարվում է չսահմանված նմուշի քվեաթերթիկ ու չի ընդգրկվելու հաշվարկի մեջ: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե ինչպե՞ս կարող է նույն

համարի երկու քվեաթերթիկներ միաժամանակ լինել քվեարկության ծրարում, ապա թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ունի սահմանած որոշում, որում նշված է, որ Ընտրական օրենսգրքով սահմանված՝ քվեարկության գաղտնիության սկզբունքի հնարավոր խախտումները, ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ հնարավոր վերահսկողությունը բացառելու նպատակով՝

1) մինչև քվեարկության սկիզբը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկներից՝ երեքից հինգ քվեաթերթիկ գցում է քվեարկության խցիկներում տեղադրված չօգտագործված քվեաթերթիկների արկղի մեջ.

2) քվեարկության ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը դատարկում է քվեարկության խցիկներում տեղադրված չօգտագործված քվեաթերթիկների արկղի պարունակությունը լցվելու դեպքում՝ թողնելով որոշակի քանակի քվեաթերթիկներ:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ նկարագրված հանգամանքներում որևէ խախտում առկա, հետևաբար, չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման թիվ 8 պայմանական համարակալումը կրողը գրառումը վերաբերում է քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողների օգնելու իրավակարգավորումներին: Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է. «Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, այցելու: Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է: Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում»: Սույն գրառմամբ ներկայացվում են օգնողի կարիք ունեցող ընտրողի և օգնողի վերաբերմունքը օգնողի ինստիտուտին, սակայն քվեարկության կարգի որևէ խախտում առկա չէ, ի վերջո, ընտրողն իրականացրել է իր քվեարկությունը, ուստի թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ գրառմամբ ներկայացված հանգամանքում Ընտրական օրենսգրքի խախտում արձանագրված չէ և քվեարկության արդյունքների վրա ազդեցություն ունենալ չէր կարող:

Սույն որոշման թիվ 6, 10 և 11 պայմանական համարակալումը կրող գրառումները վերաբերում են տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքի՝ ընտրական օրենսդրությամբ սահմանված կարգավորումներին համապատասխան կազմակերպմանը: Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված է, որ Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու հանձնաժողովի անդամն ընտրողին տրամադրում է ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ

և քվեարկության մեկ ծրար: Այսինքն, քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող հանձնաժողովի անդամը ընտրողի ներկայությամբ է տրամադրում ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար, ինչը շարունակաբար և դիտավորյալ խախտվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից:

Հետևաբար, թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, արձանագրում է, որ անհրաժեշտ է համարում միջնորդություն ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ թիվ 8/26 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Խաժակ Թոմոյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք եղել են քվեարկության կարգին առնչվող եզակի ընթացակարգային դեպքեր, ուստի նշված խախտումները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

Ինչ վերաբերում է թիվ 10 և 11 պայմանական համարակալումները կրող գրառումներին, ապա քվեաթերթիկները խմբավորած դասավորել են 8/45 և 8/46 տեղամասային ընտրական հանձնաժողովների համապատասխան գործառույթ իրականացնող անդամները, սակայն զգուշացումից հետո, հետ են դրել յուրաքանչուր քվեաթերթիկ իր տեղում և ընտրողի ներկայությամբ կրկին դասավորել են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասով՝ թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 17.09.2023թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

2. Միջնորդել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ուժը կորցրած ճանաչել թիվ 8/26 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Խաժակ Սուրիկի Թոմոյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

Թիվ 8 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ՝ **Տ. Ավագյան**